ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 03
վիճակագրության պետական խորհրդի նիստի

----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------

09.02.2018թ. ժ.11: 00

***Մասնակցում էին՝*** *Ս.Մնացականյան (խորհրդի նախագահ), Գ.Անանյան, Գ.Գևորգյան, Ս.Դավթյան, Յու. Պողոսյան, Ա.Սաֆյան, (խորհրդի անդամներ), Հ. Գրիգորյան (խորհրդի քարտուղար):*

***Հրավիրված էին՝*** *Լ.Միրզոյան (ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ), Ա.Վարդանյան (իրավաբանական բաժնի պետ), Ա. Հարությունյան (առևտրի և այլ ծառայությունների վիճակագրության բաժնի պետ):*

**Օրակարգի նախագծում երկու հարց.**

1. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2017 թվականի հուլիսի 14-ի թիվ 11-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Ա.Հարությունյան/*

2. Այլ հարցեր

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի նախագահի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:

/Քվեարկության արդյունքները-կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

**Լսեցին՝**

1. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2017 թվականի հուլիսի 14-ի թիվ 11-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Ա.Հարությունյան/*

**Որոշեցին՝**

ՈՒժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2017 թվականի հուլիսի 14-ի ««Տեղեկատվական տեխնոլոգիաների և տեղեկատվական ծառայությունների մասին» Ձև 1-ՏՏ (ամսական) պետական վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2012 թվականի հունվարի 27-ի թիվ 02-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 11-Ն որոշումը:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

*/Նորմատիվ/*

*/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ